



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11

Էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 002

« 12 » Մարտի 2015թ

«Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի
տնօրենի առաջին տեղակալ
պարոն Աշոտ Գնդոյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գնդոյան

Հայաստանի հանրապետության նախկին անտառտնտեսությունների տարածքները ժամանակին հանձնվել են ազգային պարկերի տնօրինությանը: Գավառի անտառտնտեսությունը հանձնվել է «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ին:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն Գավառի անտառտնտեսության վերաբերյալ, մասնավորապես.

- ✓ Ե՞րբ և ՀՀ կառավարության որ որոշումով է հանձնվել «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ին
- ✓ Ինչքա՞ն հա տարածք է հանձնվել Ազգային պարկին
- ✓ Ազգային պարկի ո՞ր գոտում է գտնվում այդ տարածքը
- ✓ Տրամադրել տարածքի ընդհանուր նկարագիրը /հնարավորության դեպքում քարտեզը/
- ✓ Տրամադրել անտառտնտեսությունում հաշվառված ծառերի ընդհանուր քանակը, տեսակները, տարիքը /եթե առկա են մոնիտորինգի տվյալներ, տրամադրել նաև այդ տվյալները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան